


ԱՂՕԹԱԿԱՆ ԿԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ

Այսօր շատ մարդիկ օրը քանի մը վայրկեան հապնեպ կերպով կ'աղօթեն եւ իրենց ըրածին անունը կը դնեն աղօթք: Ուրիշներ երբ խաչակնքեն, կը խորհին, որ անիկա աղօթքի պահը կը փոխարինէ: Տակաւին կան անոնք, որոնք երբ օրուան ընթացքին «Տէր Յիսուս» բառերը արտասանեն տունէն դուրս ելած ատեն կամ գործի գացած ժամանակ կը կարծեն, որ իրենց ըրածը աղօթք է: Կան, մաք մարդիկ, որոնք Սուրբ Պատարագի ներկայ ըլլալը աղօթք կը նկատեն: Այս բոլորը, սակայն աղօթքի աղփատագոյն երեսները կը ներկայացնեն, եւ շատ հեռու են ճշմարիտ աղօթք նկատուելէ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը քան անգամ խաչակնքել եւ հարիւր անգամ Յիսուսը խաչել իր մեղքերով: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը յիսուն անգամ «Տէր Յիսուս» բառերը կրկնել, առանց սակայն Յիսուսը իբրեւ Տէր ունենալ իր սրտին մէջ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ սուրբ Պատարագի գալ, սակայն որեւէ հաղորդակցութիւն չունենալ Աստուծոյ պատարագուած գառնուկի հետ: Ուստի պէտք է վերանորոգենք աղօթական մեր կեանքը: Պէտք է խնդրենք Սուրբ Հոգիէն, որ մեզի հետ աղօթէ եւ մեզի աղօթել սորվեցնէ (Յդ. 20: Հո. 8:26: Փլպ. 1:19): Երբ Սուրբ Հոգին ինք ըլլայ աղօթքի ժամանակ մեր առաջնորդն ու ուսուցիչը, այն ատեն աղօթքի ժամանակ պիտի չուզենք Տիրոջմէ, այլ՝ Տէրը պիտի ուզենք: Տիրոջ ձեռքին պիտի չնայինք, այլ՝ անոր սիրտին: Տիրոջ պարգեւները պիտի չըլլան մեր հետաքրքրութեան նիւթը, այլ՝ անոր սէրն ու փաղցրութիւնը:


ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄ 1.Պատրաստութիւն Պատարագի քահանային

Ս. Պատարագի Խորհուրդը կը սկսի «Խորհուրդ խորին» շարականով: Պատարագի քահանան ձախակողմեան աւանդատան մէջ նախ քան զգեստաւորումը, զոջման աղօթքը կը կարդայ եւ իր մեղքերուն թողութիւն կը ստանայ, այլ եկեղեցականէ մը, ապա՝ կանոնական աղօթքի ընթերցումով զգեստաւորուելէ ետք, մոմակալներուն եւ բուրվառակիրին առաջնորդութեամբ եկեղեցի կը մտնեն:

Ս. Խորանին առջեւ ան ձեռքերը կը լուայ, հրապարակաւ անգամ մը եւս իր մեղքերը կը խոստովանի առաջի Աստուծոյ եւ Ս. Աստուածածնին...Շարունակելի



ԲՈՒ ԽՍՔԵՂ ԽՍ ՂՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՄԱՐՏ 2024

ԹԻԻ 9

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ես. 56.1-57.21: Եփ. 4.17-5.14: Ղկ. 16.1-31

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 16.1-31

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով՝ թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Բեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել: Ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը գրկէ: Բանութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ի՞նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ՝ մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս»: Ապա, մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէք»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորիակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դուն որքա՞ն պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորիակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

Ով, որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով, որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է, մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս կ'ուզէք, որ Աստուած ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՐՈՏՆԵՑԻ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ

Մականունը՝ Կախիկ, ծնած է Սիւնեաց Ծղուկ գաւառի Վաղաղն գիւղին մէջ, 1315-ին: Աշակերտած է Գլաճորի համալսարանին մէջ Տիրատուր վարդապետին, որուն մահէն ետք փոխադրուած է Որոտանի վանքը, հոն ստանալով Որոտնեցի մականունը: Ան ծանօթ է, իբր մեծ աստուածաբան, իմաստասէր, մատենագիր եւ ուսուցչապետ: Հիմնած է Տաթեի համալսարանը եւ Ապրակունիսի բարձրորակ վանական դպրոցը, որոնք դարձած են աստուածաբանական եւ փիլիսոփայական կարեւորագոյն կեդրոններ: Պայքար մղած է Հայաստանեայց եկեղեցւոյ լատինացման շարժումին դէմ: Ան ժառանգ թողած իր աշխատութիւններուն մէջ արծարծած է հայ եկեղեցւոյ արարչութեան, եկեղեցաբանութեան, հրեշտակաբանութեան հարցեր եւ մանաւանդ մարդկային հոգիի մասին խորհրդածութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Յովհաննէս Որոտնեցիի նշանաւոր աշակերտներէն՝ աստուածաբան, փիլիսոփայ եւ մանկավարժ: Իր ժամանակակիցներուն կողմէ անուանուած է «Նրկորդ Լուսաւորիչ», «Նոամեծ Վարդապետ», «Վարժապետ Հայոց»: Իր կարեւորագոյն գործերէն է «Գիրք հարցմանց»ը, որ աստուածաբանութեան գործնական գիրք մըն է: Իր հմայքը այնքան մեծ եղած է, որ իր այցելած վանքերուն մէջ աւելցած է ուսանողներուն թիւը:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ինչո՞ւ Աստուծոյ ողորմութիւնն ու գթութիւնը խնդրելու համար հաւատացեալներուն կը թելադրուի ծոմապահութամբ աղօթել

Որովհետեւ ծոմապահութիւնը խոնարհութեան, հեզութեան, անձնուիրութեան եւ եսի ունայնացման արարք մըն է, գոր ենթական պէտք է գործով ցոյց տայ իր Արարիչին՝ հրաժարելով աշխարհի բոլոր ցանկութիւններէն եւ անոնց առթած հաճոյքներէն ու վայելքներէն՝ արժանանալու համար Աստուծոյ սիրոյն: Ծոմ պահողը իր սրտին ամբողջական սէրը արտայայտած կ'ըլլայ Աստուծոյ հանդէպ՝ հրաժարելով իր մարմնոյն կենսական եղող հացէն ու ջուրէն: Ան իր հաւատքն ու համոզումը յայտնած կ'ըլլայ Աստուծոյ խօսքին, թէ «Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ծոմապահութեան կամ պահքի հետ համընթաց կատարուելու են աղօթք եւ ողորմութիւն: Յոյժ թելադրելու է, որ հաւատացեալներ ծոմապահութեան կամ պահքին պատճառով ծախսերէն կրնաւորած գումարները յատկացնեն աղատներու կամ բարի նպատակներու:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Տէ՛ր Գո՛ւ բարկութեանդ ցասումը ետ դարձո՛ւր ինձմէ, որ տրտմեցուցի Քեզ իմ բազում մեղքերովս: Ողորմէ՛ Գո՛ւ դէմդ ապստամբածիս, եւ ցրուէ՛ իմ մեղքերուս սաստիկ դիզուած կոյտերը եւ միտքս բռնուէ՛ Քեզ ծառայելու քաղցր լուծին:

Եփրեմ Ասորի

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

Երբ գրկուինք տարրական բաներէ՝ գիտնանք, որ մեծ օրհնութիւններ կը սպասեն մեզի

«Այդ գիշեր բան մըն ալ չբռնեցին»: Առաքեալները սկզբնական հանգրուանին գրկուեցան քանի մը ձուկեր բռնելէ, բայց յետոյ անոնք իրենք զիրենք դէմ յանդիման գտան՝ իրենց ակնկալութիւնը անդրանցնող մեծ քանակութեամբ ձուկի: Եթէ առաքեալները բռնած ըլլային 10-15 ձուկեր, անոնք յաւելեալ ձուկերու կարիքը պիտի չզգային, եւ ոչ ալ Քրիստոս կարիքը պիտի զգար այդպիսի հրաշք մը գործելու:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԸ

Երբեմն աստուածային Նախախնամութիւնը թոյլ կու տայ, որ գրկուինք որոշ պզտիկ բարիքներէ՝ մեզ արժանացնելու համար աւելի մե՛ծ բարիքներու, ճիշդ ինչպէս առաքեալներուն հետ պատահեցաւ: Ասիկա Աստուծոյ յատուկ գործելակերպ մըն է, գոր հաւատացեալ մարդը պէտք է գիտնայ: Հաւատացեալ մարդը պէտք է գրկանքը համբերութեամբ եւ սիրով տանի, մի՛շտ յիշելով, որ գրկանքին ետին աստուածային օրհնութիւններ կան մթերուած իրեն համար:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԿ, ԹԷ ԱՍՏՈՒԱԾ Ի՛ՆՉՊԷՍ ԿՐ ԳԼՇՏՊԸՆԷ ԱՐԿԱՐԸ, Կարդա՛ր ՍԱՂՄՈՍ 7

Տէ՛ր, Աստուածս, յոյսս քու վրայ դրած եմ. փրկէ՛ եւ ազատէ՛ զիս բոլոր հալածիչներէս: Զըլլայ, որ առիւծի պէս իմ անձս գիշատեն, բզկտեն զիս եւ ազատող մը չունենամ:

Տէ՛ր, Աստուածս, եթէ յանցանք մը գործեցի, կամ ձեռքերուս մէջ անիրաւութիւն կայ, եթէ ինձի բարիք ընողին չարիք հասցուցի, կամ դրկեցի առանց պատճառի ինձի թշնամացողը, թող թշնամին վրաս յարձակի եւ հալածէ իմ անձս, թող զգետնէ ու խորտակի իմ կեանքս, եւ իմ փառքս փոշիի վերածէ:

Ե՛ւ, ո՛վ Տէ՛ր, բարկութեամբ ցցուէ՛ մեղիչներուս կատաղութեան դէմ: Արթնցի՛ր, ո՛վ իմ Աստուածս, դուն՝ որ իրաւունքը կը հաստատես:

Ժողովուրդները մեծ բազմութեամբ թող քու շուրջդ խմբուին եւ դուն՝ քու բարձրութենէդ տիրէ անոնց վրայ:

Դուն, որ կը դատես ժողովուրդները, ո՛վ Տէ՛ր, դատէ՛ զիս, որ արդար եմ եւ անմեղ:

Թող վերջ գտնէ ամբարիշտներու չարութիւնը եւ դուն արդարը հաստատէ, որովհետեւ դուն, արդա՛ր Աստուած, կը քննես մարդոց մտածումներն ու ցանկութիւնները:

Իմ պաշտպան վահանս Աստուած է, որ կը փրկէ սրտով ուղիղ մարդիկը.

Աստուած արդար դատաւոր է եւ ամէն օր կ'արտայայտէ իր գայրոյթը անարդարութեան դէմ: Զողջացող մարդուն ցոյց կուտայ իր սրուած սուրը, իր աղեղը, որ կազմեր ու լարեր է, մահուան գործիքները, որ պատրաստ է անոր համար եւ կրակոտ նետերը, որ շինէր անոր համար:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՒՔԷՆ